

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49<sup>րդ</sup> ՏԱՐԻ, ԹԻԻ 18

29 ԱՊՐԻԼ 1900

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թի՛ Կ. Պոլսոյ եւ թի՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ 1<sup>ին</sup> թիւն :

Մասիս առապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Դաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն մօտ :

Չեղբէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍԹԷ

درعليه ده غلطه ده «ماسيس» غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Ղալաթիա, Նորասունկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



# ՌՕՍՒԱ — ROSSIA



ԱՊՈՒՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

|                                          |             |       |
|------------------------------------------|-------------|-------|
| 1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ | 34,775,642  | Քրանք |
| Երաշխաւորութեան դումար                   | 121,765,333 | »     |
| 1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած | 164,172,000 | »     |

Կեդրոնատեղի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մախսան հին տեղը

Ընդհ. Քննիչ  
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ  
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵՆ

## ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊՈՒՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ (ԻՀԸԼԼ)

Նպասաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կարասի, ապրանք

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՖՐԱՆՔ

Ընդհանուր գործակասար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճոյութեան խան, Թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան գրաստանըն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

## “ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊՈՒՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎՈ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՌՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաւորութեամբ, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութիւնէ ետքը, երբէք ապահովագրիւնը (քոչիս) չեն ջնջուիր, մենամարտն ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին, բնաւ ու եւ քարհետի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագրիւն (քոչիս) չի պահանջուիր, ապահովագրիւնը վճարուած դպրեւոր պարագային՝ ապահովագրիւնը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չառնուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրութեանը:

Արկածեւններու դեմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կռքի, թրամուէյի, երկաթուղիի, շողեւաւի, առադաստանաւի, միջատներու խայթուածքի եւ ապահովագրութեան արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ու եւ քարկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ու եւ քարկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակասար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճոյութեան խան, Թիւ 53, 54, 55, 56

# ՄԱՍԻՆ

49-րդ ՏԱՐԻ

— 29 ԱՊՐԻԼ 1900 —

ԹԻԻ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այվազովսքի մանր ՄԷՐՍԵՏԵՍ — Տխուր բեղեր. «Երկար ուղին». ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ. — Գլորացական առողջապահություն. Գլորոցի հիւանդություններ. ՏՈՒՔԻ. ՎԱՀՐԱՄ ԹՈՒՐԿՈՍԵԱՆ. — Գողցուած հաճողքը (Նորավայր) ԱՆՅՈՐԻ. — Փունջ գերմանական բանաստեղծութանց «Նկարիչը». Բրիտան հեղեղ. Թարգմ. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ. — Յիշատակ մը Այվազովսքի. ՏԻՒՐԱՆ ԱՐՓԱՐԵԱՆ.

## ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ՄԱՅՐ



Ծովին, փրփրոտ ու ամենի ծովին, խա-  
րակուտ ու ցցուն ծովեզերքներուն, արհա-  
րոտ մրրիկներուն բանաստեղծը, սիրահար  
հոգին որ ամբողջ կեանքի մը անեղութեամբ  
թեւածեցաւ բոլոր ջրեղէն տարրերուն, բոլոր  
ջրասոյգ վայրերուն, լիճերուն, գետերուն ու  
ծովափներուն վրայ, մեռեր է, ինչպէս գու-  
ժեցին օրագիրները: Եւ այն ձեռքը՝ որ  
գիտցաւ վրձինի միակ հարուածով մը է՛ն  
փոթորկոտ ծովը ամէնէն խաղաղ տարրին  
վերածել եւ ամէնէն մոլեգին ծովը է՛ն քն-  
քուշ ջուրի տարածութեան, այդ պարիկի  
ստեղծիչ ձեռքը որ է՛ն հոյակապ յղացումները  
ունեցաւ եւ որ շատ հեղ ալիքը իր շարժումին  
եւ ամպը իր գալարման մէջ կրցաւ նկարել,  
սառած, փայտացած է այլեւս, խաչածեւուած  
իր ձախին հետ՝ անշունչ մարմնի մը վրայ՝ որ  
երբեմնի հրաբորբոք արուեստագէտին է  
եւ զոր թերեւս այսօր հողին յանձնած են:

Կէս դար մը կայ որ բովանդակ եւրոպա  
իր առաջին ծովանկարիչը կը դաւանի Այ-  
վազովսքին, — թէեւ մեզի համար չա՛տ ցա-  
ւալի դժբաղդութեամբ մը՝ շատեր դեռ մին-  
չեւ հիմա Ռուս մը կը կարծեն զինքը: — Եւ  
սուգը զոր այսօր կը զգանք մենք, մեր ցե-  
ղին ամէնէն գեղեցիկ ծաղիկներէն մէկը հո-

ղին յանձնելով, մեզի հետ գրկած է նաեւ  
չա՛տ մը երկիրներ, գրեթէ բովանդակ աշ-  
խարհը, որովհետեւ արուեստը հայրենիք  
չունի եւ ամէն արուեստագէտ, իրեն ծնունդ  
տուող երկրին սլատկանելէ աւելի, սեփակա-  
նութիւնը կը դառնայ ո՛ր եւ է ազգէ չա՛տ ա-  
ւելի տարածուն, չա՛տ աւելի համապարփակ  
համայնքի մը՝ որ Մարդկութիւն մեծ անունը  
կը կրէ:

Ու պէտք է խոստովանիլ հոս թէ այդ  
սուգը օտարը մեզմէ աւելի գիտակցօրէն եւ  
հետեւաբար մեզմէ աւելի խոր կրնայ զգալ  
քանի որ ի՛նք վայելած է հանճարը որ վաղը  
միւս օր, անզգալարար յիշատակի մը պիտի  
փոխուի. ան ծանօթ է. անոր զործերուն,  
ըմբռնած է այն բովանդակ հրապարակ,  
հմայքը, գեղեցկութիւնը որոնք անոնցմէ կը  
ծորին, եւ այս պահուս կրնայ գնահատել  
մեծութիւնը կորուստին զոր Գեղարուեստը  
կ'ընէ:

\* \* \*

Ապագածուտ, ամենի ու մշտակոծ ալիք-  
ներով ծեծուած քաղաք մը ծնունդ տուած  
է Այվազովսքին, թէոգոսիան, խրիմու թե-  
րակղզիին այդ լայնի նաւահանգիստը՝ որուն  
առջեւէն ծովը իր արհաւիրքը սլակաւ չընէր,

եւ յարաճուն մոլեգնութեամբ ժամէ ժամ իր փրփրոտ համրոյրը կու տայ անմերձեւալի անմագլցելի խարակներու որոնց կողերուն վրայ ձայեր կը թեւածին եւ որոնց կատարին վրայ արծիւներ իրենց բոյնը կը շինեն : Զուրի ցայտքեր կը փրփրին օրն ի բուն այդ ժայռերուն կողն ի վեր , հսկայ ալիքներ կը կազմուին ու կը փչուին հոն անընդհատ , անվհատ , եւ քարերն են որ միշտ տեղի կու տան . սիրելու կերպ մըն է աս որով ծովը խարակները կը շոյէ առանց բնաւ անոնցմէ բաժնուիլ ուզելու . եւ արհաւիրտ , ահաղնադրող հով մը հսկայ սիրերգը կ'երգէ այդ վայրի սիրոյն որ դարեր կը տեւէ ու դեռ չէ չիջած : Եւ այդ սէրն է անշուշտ որ գիւթած է Այվազովսքին սլավոկուց , անոր հոգիին լմելով դէպի ծովն ու խարակները տածած այն անսպառ համակրութիւնը որ ինքն ալ իր կարգին սպառիլ չէ գիտցած բնաւ : Այվազովսքի եթէ ծովափին մօտ ծնած չլլար , թերեւս Գեղարուեստը զինքը չողբար այսօր :

1817ին ծնած է հոն , Թուրքիայէն գաղթած ծնողքէ մը որ քաղքին կարող դասակարգին չէր պատկաներ : Ու պզտիկ հասակէն Գեղարուեստին համար ցոյց տուած է այն անսկանդ սէրը՝ որուն հաւատարիմ մնալուն շնորհիւն է որ կրցած է իր սպազայ փառքին հասնիլ . որպէս զի աւելի հմայութի իր գործանքին առարկայէն , աշխատած է ա'լ աւելի գեղեցկացնել զայն եւ յաջողած ալ է : Այդ մանկութեան տարիներուն՝ իր առաջին փորձերը եղած են մատիտով բնագործարարութիւններ կարգ մը հասարակ նկարներու սրունք իր ձեռքը ինկած էին . պարզ գծադրութիւններ ինքնին որոնց մէջ սակայն ընտանիքին բարեկամ ճարտարագէտ մը , Կօխ , — զոր նշանաւոր ծովանկարիչը միշտ երախտագիտութեամբ յիշած է , — կրցած է տեսնել առաջին բողբոջումները , ապագայ տաղանդի մը , եւ սկսած է քաջալերել զայն , միեւնոյն ատեն perspectiveի դասեր տալով անոր : Այվազովսքի յաճախելով հանգերձ տեղւոյն գաւառական ուսումնարանը ուր հայերէն , թուրքերէն եւ ռուսերէն կը սորվէր , կը հետեւի նաեւ Կօխի դասերուն , ու քիչ ատենուան մէջ ա'յն աստիճան յառաջդիմու

թիւն ցոյց կուտայ որ Կօխ օր մը գաղափարը կ'ունենայ զինքը քաղաքագետ իվանովիչ Կազնաչէվի յանձնարարելու , ներկայացնելով նաեւ գծագրութիւններէն մէկ քանին : Քաղաքագետը պարզապէս կը հմայուի ու կըսէ Կօխին .

— Բայց ես կը փափաքէի մօտէն ծանօթանալ այդ պզտիկին հետ :

Ներկայացումը կ'որոշուի եւ Կօխ , Այվազովսքին ու հայրը առնելով կը բերէ քաղաքագետին՝ որ տղան տեսնելուն պէս զարմացմամբ կը բացագանչէ .

— Բայց նոյն ինքը նախորդ շարժումն երաժիշտն է :

Ու կը պատմէ թէ ի'նչպէս . ռուսկա՛մ օրեր տա՛ջ , տան մը առջեւէն անցած պաշուն պատանի մը տեսած էր՝ ջութակ զարնելու զրաղած : Պատանին որ Այվազովսքին է եղեր , զինքը տեսնելուն պէս կը պահէ նուագարանը , բայց քաղաքագետը կը յանձնարարէ որ շարունակէ ու քիչ մը ատեն ալ զայն մոտիկ բնէլ ետքը կը հեռանայ :

Նոյն օրը , քաղաքագետը պատանի Յովհաննէսին կը նուիրէ ջրաներկի տուփ մը եւ գծագրութեան լուծողով . նուէրներ՝ սրունք շատ յարգի էին տղան համար , քանի որ հօրը աղքատութիւնը առիթ չէր տար իրեն ուղած ծախքը ընելու : Ասկէ զատ , Կազնաչէվ կը գովէ անոր նախասիրութիւնը եւ զայն ուղղակի իր պաշտպանութեան տակ առնելով կ'արտօնէ զայն աղատօրէն մտնել իր տունը եւ ընկերութիւն հաստատել իր զաւկին հետ :

Տարի մը ետքը , 1830ին , Կազնաչէվ Տուրիկեան նահանգներու նահանգագետ կ'անուանուի եւ կը փոխադրուի Սիմֆերոփոլ բայց չուզելով իր հեռացմամբ Յովհաննէսը զրկել մինչեւ այն ատեն գտած պաշտպանութենէն , հետը կ'առնէ ու իր զաւկին հետ զայն տեղւոյն գիմնազիոնը կը դնէ : Ծանօթներու չլրջանակը կ'ընդլայնուի հոն , եւ Յովհաննէս յարաբերութիւն կը հաստատէ ազնուական բարձր դասու պատկանող պատանիի մը՝ Ֆէօտօր Դիմիդրիէվիչի հետ , որուն օր մը կը նուիրէ սլավոկ նկար մը . «Աղօթքի զրաղած խումբ մը Հրեաներ» , երիտասարդը նկարը

մօրը կը ցուցնէ՝ որ զհայլած անոր բնականութեան եւ գեղեցկութեան վրայ, կ'որոշէ ինք ձեռք առնել Յովհաննէսին ապագայ մը պատարաստելու հոգը, եւ հաւաքելով անոր նկարները, կը զրկէ Մոսկուա, իր ծանօթներէն Տօնչի ճարտարապետէն խնդրելով որ արքունեաց ներկայացնէ զանոնք եւ բարեխօսէ տաղանդաւոր պատանիին համար: Ծարտաբայետը իշխան Վօլկոնսկիի միջոցով կը կատարէ յանձնարարութիւնը ու նկարները կը ներկայացուին:

Հմայքը՝ զոր Ալվազովսքիի նկարները ներշնչած էին Սիմֆիլոպօլէն մինչեւ Մոսկուա, կը տարածուի նաեւ Բեդերստուրկ եւ անմիջապէս կը հրամայուի իշխան Վօլկոնսկիի, պատանի Յովհաննէսը մտցնել Բեդերստուրկի Գեղարուեստական Ակադեմիան: Ալվազովսքի, հազիւ գիմնալիսնի միջին դասընթացքը աւարտած, կը փոխադրուի Բեդերստուրկ եւ օգոստոս 23ին (1833) կը սկսի աշակերտիլ Գեղարուեստական Ակադեմիային:

Այդ Ակադեմիային մէջ Ալվազովսքի էն դառն ու էն փոթորիկոտ շրջաններէն մէկը անցուցած է, սրտի անվիանդ եւ անյողգորդ արիւթեամբ մը դիմադրելով բոլոր այն արգելքներուն, բոլոր այն պատտարհներուն՝ որոնք իր դէմ յարուցուած էին: Հոն ինք մաքառած է իր ընկերակիցներուն տառապանքներէն, քսութիւններէն եւ քիչ է մնացած որ իր բովանդակ ապագան խորտակի թու: Նաւոր նախանձէն ֆրանսացի ուսուցչի մը՝ որ զինքը գերազանցելը չէ՝ ներած բնաւ իրեն, իր կեանքին մէջ, այդ ուսուցչին պատմութիւնը թերեւս ամէնէն վառ դրուպն է որ պահ մը մթազնած է իր ծիծաղիկոտ արշալոյսը, յանկարծական մռայլ ամպ մը՝ որ իր ծիծղուն սրտին արեւը մրտած է, ճանչցնելով անոր յուսախաբութիւնը, զրկանքը եւ դեռ ինչ դառն բան որ կ'ուզէր:

Բայց իր հմայքոտ տաղանդը եւ այն հրաշալիքները՝ զորս Ակադեմիային մէջ նկարած է յաջորդաբար, ամուր զօրավիգներ եղած են իրեն, ու կրցած է դիմագրաւել բոլոր այդ վատութեանց. — արեւը՝ անձրեւոտ օդէ մը ետք շատ աւելի փաղփուռ, շատ աւելի ուկեցեւ կը ծախի: Նիքոլա կայսրը՝ ի նշան իր

գնահատման՝ 1000 ռուպլի պարգեւելով Ալվազովսքիին, զայն ուղեկից կը նշանակէ կայսերազուն իշխան Կոնստանդին Նիքոլայեւիչի որ 1836ի ամառուան մէջ Նաւային պոյոյտ մը պիտի կատարէր մինչեւ Ֆինսքի ծովածոցը: Այդ շրջանէն ետքը կը սկսին Ալվազովսքիի յաջողութիւնները. ա'լ այնուհետեւ փառքը միշտ շրջապատած է տաղանդաւոր արուեստագէտը՝ որ հանճար մը բլլալ կը խոստանար եւ հոչակը զինքը երգած է աշխարհի այս ու այն մասին մէջ, է'ն աղւոր, է'ն նախշուն եւ է'ն կեանքոտ ծաղիկներէն փառապատի մը հիւսելով Ալվազովսքի անունին շուրջը: Այդ փառապատիւը խամրիլ չէ գիտցած բնաւ:

Ալ ատկէ ետքը միշտ այդ յաջողութեան հետ է որ զինքը կը գտնենք այն ամէն տեղերը ուր գացած է եւ կամ պատկերներ ցուցադրած: « Առաջին կարգի նկարիչ » փառքով 1839ին կ'ելլէ Բեդերստուրկի Ակադեմիայէն, ընդհանուր համակրութիւն շահելով Ռուսիոյ մայրաքաղաքին բարձր ու զարգացեալ դասակարգին քով, որ իր աշակերտութեան պահուն քանիցս ամիթը ունեցած էր իր մշտաբողբոջ եւ հեյալակա տաղանդը գնահատելու: Կը շահի նաեւ համառ մը՝ որ բովանդակ Ռուսիոյ մէջ իր արձագանքը դանելէ ետքը, Վենետիկի (1842) ու Բարիլի (1843) ցուցադրութիւններով եւրոպական կը դառնայ՝ տակաւ համաշխարհային հանգամանք մը ստանալու համար: Ռուսիոյ կայսրը զինքը կը պատուէ Ս. Աննայի ասպետութեան նախ Գ. աստիճանով (1845) եւ յետոյ Ա. աստիճանով (1851): Անգամ կ'ընտրուի Ամսդերտամի արքունական Գեղարուեստական Ակադեմիային (1847) եւ Ֆրանսական կառավարութիւնն ալ Պատուոյ Լէգէոնի իաջով կը կը յայտնէ այն հիացումը՝ զոր ամթած էին Բարիլի մէջ իր ցուցադրած նկարները (1857): Ու կատարեալ փառք մը ու միեւնոյն տառն հոգեկան բարձր ուրախութիւն մը իրեն համար՝ նոյն այդ 1847 տարւոյն մէջ ուսուցիչ կը նշանակուի Բեդերստուրկի Գեղարուեստական Ակադեմիային՝ որուն ամբողջ վեց տարի աշակերտած էր երբեմն (1833-39):

Յայտնի չէ թէ Ալվազովսքի հասցուցած

է աշակերտներ՝ որոնք իր տրուեստին առանձնայատկութիւններուն թափանցած եւ զանոնք կիրարկած ըլլան . սաջափը միայն գլխենք որ նմէնէն արդիւնաւոր ու պողտառ պաշտօնավարութիւններէն մէկը ունեցած է Ակադեմիային մէջ , քանի որ այդ միջոցին է որ պատուանշան ստացած է ուսուցիչութենէն եւ Բեգերսուրկի Աշխարհագրական Ընկերութեան կողմէ ալ անդամ ընտրուած : Այդ ուսուցչութեան շրջանէն ետքը հոս ու հոն կը տարտղուի իր յաջողութեանց շղթան՝ որուն իւրաքանչիւր օղակը մէկ մէկ փառագոյնով հիւստեւած է . պսակներ՝ որոնց ամէն երկիր իր ծաղկին թոյրն ու բոյրը տուած է : Յաջորդաբար զինքը կը գտնենք նախ Բարիկ ահագին յաջողութեան մէջ , յետոյ (1874) Ֆիօթէնցայի մէջ՝ հիացման արտայայտութիւններու գոգը ընդեւելուած , յետոյ Պոլիս (1875) ուր կայսերական բարձր գնահատմամբ Օսմանիէ պատուանշան կը շնորհուի իրեն : Եւ այդ բոլոր յաջողութիւններուն նուիրագործումը վերջի վերջոյ տեղի կ'ունենայ Բեգերսուրկի մէջ՝ ուր 1887ին՝ կայսերական Գեղարուեստական Ակադեմեան չքեղ հանդէսով մը կը տօնէ իր երբեմնի աշակերտին յիշատակայ գործունէութեան յորեւեանը : Տասը տարի ետքը , 1897 սեպտեմբերին Թէոդոսիո ալ իր գաւալը կը հանդիսաւորէ , կազմակերպելով գերազանցապէս չքեղ հանդէսներ՝ որոնցմով Այվազովսքի վաթսուն տարուան նկարչի գործունէութիւնը կը փառարանեն : Ու Նիքոլա Բ. կայսրը « Աղեք.

տանդր Նէվսիի » պատուանշանով իր սքանչանքը կը յայտնէ աշխարհահռչակ արուեստագէտին՝ որուն երիտասարդութեան պաշտպան հանդիսացած էր երբեմն իր պապը :

\* \* \*

Այս տաղանդը , այս հանճարն էր որ մարեցաւ անցեալ ապրիլ 19ին , ծովի քաղքին՝ Թէոդոսիոյ մէջ՝ ուր Այվազովսքի վերադարձած էր ծերութիւնը անցընելու , առանց ձեռքէն ձգելու վրձինը որ երկու տնաւարտ մնացած նկարներու հմայքը կը բանէր դեռ մինչեւ վերջին օրերս : Ինչպէ՞ս տեղի ունեցաւ արդեօք այդ մահը , Այվազովսքի ինչպէ՞ս կըրցաւ բաժնուիլ ծովին՝ որուն ամրոյժ կեանք մը նուիրած էր , եւ որ իրմէ քանի մը քայլ անդին միշտ իր փրփրոտ համբոյրները կը ցայտեցնէր անշուշտ Թէոդոսիոյ խարակներուն կողերն ի վեր , գրգռուած , յուզուած ու շաշուն :

Ու եթէ ինք հոյին պիտի յանձնուի , գէթ իր սպիտակ մարմարէ արձանը՝ զոր նկարչութեան մուսան կը պսակէ եւ որուն տակէն մշտահոտ աղբիւր մը կը ծործորի , Թէոդոսիոյ բարձունքէն յաւերժական հանդիսատեսը պիտի ըլլայ ծովին ու խարակներուն այդ սիրոյն՝ որուն հովեր հսկայ սիրերգը կ'երգեն եւ որ դարեր կ'ընէ դեռ շէ չիջած :

Ո՞վ գիտէ թերեւս Այվազովսքի ալ այս միթիւմարութեամբ միայն կըրցաւ բաժնուիլ ծովին . . .

ՍԵՐՍԷՏԵՍ

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

### ԴՊՐՈՑԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Տօքք. Վահրամ Թորգոմեան կը շարունակէ իր օգտաշատ դասախօսութեանց շարքը Բերայի Արհեստանոցին մէջ, Դպրոցական առողջապահութեան վրայ, հինգ մասերու բաժնուած . Ա. Մանկավարժը առողջապահութեան մէջ, Բ. Դպրոցի հիւանդութիւններ, Գ. Ֆիզիքական կրթութիւն, Դ. և Ե. Դպրոցական երաժշտութիւն՝ նկատելով որ կիրակնօրեայ դասախօսութիւնները — որոնց իւրաքանչիւրը իր ճիւղին յատուկ շահականութիւնը ու հրահանգիչ հանգամանքը ունի — առանձին տետրակներով պիտի հրատարակուին Ուսումնական Խորհուրդին կողմէ, մեր յարգելի աշխատակցէն խնդրեցինք միայն մէկ մասը իր ուսումնասիրութեան — նախորդ կերակի ծրարտասան-

ուածին գլխաւոր գիծերը — որոնց ընթերցումը Մասիսի միջոցաւ տարածուելով գաւառային դպրոցներն ալ, բերնս իր բարերար ներգործութիւնը կ'ունենայ տղոց նիստ ու կացին և առողջապահիկ պայմաններուն վրայ:

# Ս.

Դպրոցի հիւանդութիւնները բազմաթիւ են. ախտաբանական հատորներու պարու-նակած գրեթէ բոլոր հիւանդութիւնները կըր-նան պատահիլ դպրոցի մէջ. կա՛ն որ նոյն իսկ դպրոցի մէջ առաջ կու գան. կա՛ն որ դուրսէն հոն կը փոխադրուին: Ազգ. վարժա-րաններուն մէջ հազուադէպ չեն այդ երկու կարգի հիւանդութիւններն ալ: 1886էն ի վեր թաղային մէկ երկու դպրոցներու առողջապա-հութեան մօտէն հսկելու առիթ ունեցած ըլ-լալովս, տեսած եմ անոնցմէ գրեթէ ամէնն ալ որոնց մասին դժարագարար չեմ կրցած ունենալ օրինաւոր վիճակագրութիւն:

Դպրոցական հիւանդութիւններու պատ-ճառ համարուած է գլխաւորապէս երեք բան. նախ՝ աշակերտներուն նստողական կեանքը (sédentarité). յետոյ անոնց ուղեղին բազմաշ-խատութիւնը ու չափազանց յոգնածութիւնը (surmenage intellectuel). Եւ երրորդ՝ վար-ժարանին անմաքրութիւնը: Այս երեք պատ-ճառներու մասին 1874էն ի վեր ստատիկապէս բողբոջ եղած են նշանաւոր բժիշկներ, Ֆր-րանսայի մէջ՝ Առնու, Տայլի, Շուէտի մէջ՝ Աքսըլ Ռէյ, Բրուսիայի մէջ՝ Ֆինքընպիւրկ եւ Գօն, ինչպէս նաեւ Լանես, Ֆլէսօլ, Ժա-վալ, Հաուտի, Պօմէժ, Պաւառաէլ, Ժիւլ Ռօշաւ, Բէթէն եւ ուրիշներ, որոնք 1886 եւ 1887 թուականներուն ալ Բարիզի Բժշկական Ակադեմիին մէջ խիստ կարեւոր ու տաք վի-ճարանութիւն մը բացին այս մասին, եւ յա-ջողեցան մեծամեծ բարեփոխութիւններ ներ-մուծել կրթական ծրագիրներու մէջ, ու ա-ռողջապահական կենսաւէտ բարեփոխներու հայր ըլլալ դպրոցական կեանքի մէջ:

Եւրօպացի առողջաբաններու կարծիքով, դպրոցական հիւանդութիւններու գլխաւորն է աչքի ցաւը եւ կարճատեսութիւնը (myopie). առաջին անգամ Անգլիացի Ուէր բժիշկը, 1813ին, աշխարհութեան առարկայ ըրաւ զըպ-րոցական աշակերտներու տեսողութեան հի-ւանդ վիճակը. բայց աւելի Պրեպոսի Զեր-ման Գօն բժիշկն եղաւ, որ քսան տարի շա-

րունակ այս մասին մանրակրկիտ հետազո-տութիւններ կատարելով, յայտնի ըրաւ որ դպրոցը կարճատեսութեան գործարան մըն է պարզապէս. 30,000է աւելի աշակերտներու աչքերը քննեց, եւ տեսաւ որ անոնցմէ հա-րիւրին 15ը եւ աւելին, արդէն իսկ սկսած էին կամ կը սկսէին կարճատես ըլլալ: Կար-ճատեսութեան պատճառն է, ըստ Գօնի, վարժարանին մէջ մոտոյ լոյսին անյարմա-րութիւնը, աշակերտներուն յոռի եւ չափա-զանց մտադրաւորութիւնները, դասագրքերուն փոքրատառ եւ աչքի յոգնեցուցիչ ըլլալը, գրասեղաններուն ու նստարաններուն անկա-նոն ու տծեւ շինուածքը, եւ աշակերտներուն անրնական նիստն ու կացը: Չգիտեմ թէ մեր մէջ ո՞րչափ է կարճատես եղող կամ կար-ճատեսութեան... պատրաստուող աշակերտ-ներուն թիւը. սաչափ միայն կրնամ ըսել, որ եթէ օր մը յանկարծ ակնաբուժի մը հետ թաղային ո՛ր եւ է վարժարանի մը աշակերտ-ները քննելու ելլենք, չա՛տ կարելի է որ ա-նոնցմէ հարիւրին քսանը հինգը դռնենք են-թակայ կարճատեսութեան կամ ուրիշ տեսակ աչքի տկարութիւններու. եւ ինչո՞ւ չզըտ-նենք այդ թիւը, քանի որ Գօնի նշանակած պատճառները մեր դպրոցներուն մէջ, ա՛լ ա-ւելի գոյութիւն ունին. քանի որ մեր զըպ-րոցներուն լոյսը, գրասեղանները, նստա-րանները, դասերը, դասագիրքերը եւ այլն եւ այլն, տակաւին առողջապահական չեն. այո՛, մեր աշակերտներուն աչքերը պէտք է որ ցաւոտ ըլլան եւ կարճատես, եւ տեսէք թէ ի՛նչպէս կը սկսի աչքի մը կարճատեսու-թիւնը:

Աշակերտը մթնշաղ սրահի մը մէջ, անկա-նոն նստարանի եւ անյարմար գրասեղանի տօջեւ նստած, արդէն, եթէ ունի փոքրա-տառ դասագիրք մը, ստիպուած է զայն իր աչքերուն չա՛տ մօտիկ բռնել. կամ իր աչ-քերը անոր մօտեցընել, որպէս զի կարենայ կարդալ որոշապէս. այս պարագային, աշա-կերտին աչքի բիրբըր պէտք է որ իրարու սաստիկ մօտիկնան, որպէս զի՝ տեսութեան

պարզագոյն կէտին համար լարուին եւ յարմարուին . ընկերութեան այս մերձեցումը տեղի կունենայ աչքերու դուրսիցի միաններու միջոցաւ , որոնք կ'ամբիոթուին , կը կծկուին , եւ իրենց կծկուելովը կը ձեռն ափնագնդիկները . եթէ այս ճնշումը ստիպ եւ երկար տեւէ , յայտնի է որ կը վնասէ ափնագնդիկներուն , անոնց հորիզոնական առանցքը կերկարէ , գրեթէ ձուածեւ վիճակ մը կուտայ , տեսութեան պարզագոյն կեդրոնը կը բերէ աչքի սարդոստենիին (rétine) եւ սառնեկիին (cristallin) միջեւ , կը յօրինէ կարճատեսութիւնը . կարճատեսութիւնն ո՛չ այլ ինչ է , բայց եթէ խախտիլն ու յառաջանալը տեսութեան պարզագոյն կեդրոնին , որ բնական ըլլալու համար պէտք է որ ճիշդ ու ճիշդ աչքի սարդոստենիին վրայ իյնայ ( ինչպէս որ հեռատեսութիւնը կարճատեսութեան հակառակն է , այսինքն տեսութեան պարզագոյն կեդրոնին սարդոստենիին ետեւը անցնիր ) . այս առաջին պատճառ . երկրորդ՝ աշակերտը կարգաւ ժամանակը , իր անկանոն նստարանին եւ գրասեղանին բերմամբ ստիպուած ըլլալով նաեւ գլուխը առաջ բերել , վար կախել , այդ պահուն՝ վիզին երակները բաւականին կը սեղմուին , գլուխը գացող արիւնը այդ պատճառաւ չի կրնար ազատ դարձնուիլ զէպի կուրծքը՝ եւ կը ծաւալի ուժով ուղեղին , երեսին ինչպէս նաեւ աչքերուն մէջ , որ բնականաբար սովորականէն աւելի արիւն գոյանալով , առաջ կուգան նորանոր ճնշումներ , որոնք միանալով նախորդ միանային ճնշումներուն , կազդեն ափնագնդիկին հեղուկ մասին , ապիկեկիին (humeur vitreux) , զայն զէպի ետ կը հրեն , կը մղեն , որով կ'երկարեն դարձեալ ափնագնդիկին հորիզոնական առանցքը եւ կը յօրինեն կարճատեսութիւնը . աչքերուն այս վիճակին վրայ աւելցուցէ՛ք վարժարանին աղօտ լոյսը , նաեւ օդին սառնկանութիւնը , կոյանոցներու գարշահատութեան վատ ազդեցութիւնները , կունենաք եւ ահա կուգրու , թարթիչներու , արտօսութեան լարերու մեծութիւն , որոնցմէ դպրոցի մանուկները աղօտ պահելու համար է որ առողջապահները կուղեն որ վարժարանին լոյսը ըլլայ պայծառ , իյնայ աշակերտին ձախ կող-

մը , նստարաններն ու գրասեղաններն առողջապահական օրէնքով շինուած ըլլան , աշակերտները նստին միշտ ուղիղ եւ իրարմէ բաւական հեռու , որպէս զի մէկին ստուերը միւսին լոյսը չարգիլէ , գառագործերը ըլլան խոշոր տաւերով , վարժարանին օդը ըլլայ միշտ թարմ , վերջապէս կոյանոցները ըլլան շարունակ մաքուր եւ հակաանխտած որպէս զի վարժարանին շորս գին չտարածեն աշակի (ammoniaque) անտանելի հոտ , ինչ որ տղոց աչքերը կարցունքոտէ եւ հիւանդ կրնէ : Բարեբաղդաբար , վարժարանի մէջ յառաջ եկած կարճատեսութիւնը շուտով կը դարմանուի եւ կանհետանայ . եթէ կանուխէն պէտք եղած բժշկական խնամքները չի զնայուին :

\* \* \*

Աչքի ցաւերէ եւ կարճատեսութենէ վերջը վարժարաններու սովորական հիւանդութիւններն է , ուղեղային ծանրութիւնը (Congestion cérébrale) եւ անոր արդիւնքն եղող գլխացաւը , կիսագլխացաւը , քիթի արիւնը եւայլն , որոնց պատճառն է՝ աշակերտներուն շարունակական նստողականութիւնը անյարմար նստարաններու վրայ եւ սպաւանուած օդի մէջ , ու անոնց մտային աշխատութիւններուն չափազանցութիւնը : Եւրօպայի հեղինակներու վիճակագրութիւններուն համեմատ , ուղեղի ծանրութիւնը հարիւրին յիսուն յաճախաբար է վարժարանի մէջ . չեմ կարծեր որ մեր մէջ ասիկէ պակաս ըլլայ , քանի որ մեր վարժարաններն ալ ազատ չեն ուղեղի ծանրութիւն առթող պատճառներէ :

Երբ տղայ մը երկար ժամանակ գլուխը կախելով աշխատի , պարանոցի երակներուն ճնշուելովը գիտենք որ զէպի գլուխը արիւնի հոսանք մը կը գոյանայ . այդ վիճակին մէջ եթէ ազատ անյարմար նստարանի վրայ է , աշխատութեանը ժամանակ կը ստիպուի ո՛չ միայն գլուխը ծռել , այլ եւ մէջքը . այս դրութեամբ անոր փողը կը ծալուի , աղիքները կը ճնշուին , կը սկսին նեղել ստոծանը , դանդաղել տալ կանոնաւոր , ելեւէջը , որ ա՛յնչափ հարկաւոր է բնական շնչառութեան համար . ստոծանի նեղուելովը կը դժուարանայ թոքերու խաղը , այսինքն՝ շունչի հան-

գիտտ առը եւ հանգիստ տուրը, որով ահա գէպի գլուխը տեղի կունենայ արիւնի հոսանք, որուն դարձը գէպի կուրծք՝ դժբաղդաբար ազատորէն չի կատարուիր, արգիւտած ըլլալով արդէն պարանոցի երակներուն ճնշուած վիճակին պատճառաւ, արիւնը հետզհետէ կը խռնի ուրեմն գլուխին մէջ, մանուկին երեսները, այտերը, աչքերը կը սկսին կարմրիլ, ուղեղը կը ծանրանայ, չափէն աւելի արիւն ստացած ըլլալուն համար, կը յոգնի, կը նեղուի, եւ կը սկսի ցաւեր զգալ ուղեղին այս ծանրացած վիճակին մէջ, խեղճ մանուկը դասը սերտելու կամ դասը մօտիկ ընելու ստիպուած, կը սկսի անզգալարար անհամբերել եւ դժուար շունչ առնել, եւ ահա կը հառաչէ, կը յօրանջէ, այդու երկար շունչ մը, խորունկ շունչ մը առնելու, թոքերուն մէջէն պակսած օդը բնազդօրէն լեցունելու համար, բայց ի՞նչ օգուտ, քանի որ իր մոքին չափատանջ վատաւիւր կը շարունակուի, քանի որ մարմինը կը պահէ իր ծալուած դիրքը, եւ զուրկ իր կախ վիճակի, ուղեղը՝ որ բազմադիմի ջիւղերու միջոցաւ սերտ յարաբերութիւն ունի եւ կապակցութիւն մարմնի ստէն մէկ մասին հետ, ինչպէս նաեւ սրտի եւ շնչէրակներու հետ, իր ծանրացած վիճակովը կը սկսի շուտ վատաւիւր ամէն կողմ, եւ կը ծնուցանէ ջղաճգտումներ, ջղային եւ մկանային ցաւեր, սրտի բարախումներ, որոնցմէ

անբաժան է գլխացաւը կամ կիսադլխացաւը իր անհատնում փոխումներով, եւ քթի արիւնը, որոնք կրնան չափ վտանգաւոր հետեւութիւններ ունենալ, եւ առթիւ ուղեղի, խելանդատակի բորբոքումներ, տեսակ տեսակ արիւնահոսութիւններ, մտային խանգարումներ, սրտի հիւանդութիւններ եւայլն, Այս տխրատիւր եւ մահատիւ վիճակներէն ազատ պահելու եւ զանոնք փրկելու համար է որ առողջարան բժիշկներ ձայն բարձրացուցին եւ միահամուռ պահանջեցին, որ վարժարաններու ծրագիրները բեռնաւորեալ չըլլան, դասախօսութիւնները մոքի յոգնեցուցիչ չըլլան, գրասեղաններն ըլլան կուշեցեան կամ Պերովնեան դրութեամբ, դասատուները աշակերտներու նկատմամբ խստապահանջ չըլլան, դասերը քիչ ըլլան եւ հաճոյական, երգ, պար, պտոյտ, խաղեր եւ մարմնամարզներ ընդմիջեն շուտ շուտ ամենակերպ դասեր, աշակերտները շարունակ մաքուր օդի եւ արեւի մէջ ելլեն, որպէս զի սթափին իրենց թմրութենէն, արթնան, կազդուրուին եւ ինքզինքնին մարմնային այլեւայլ շարժումներու կամ ձայնային կրթութիւններու տալով, շուտափոյթ նորոգեն իրենց ուղեղին այն հիւանդագին բջիջները զորս երկարատեւ տքնութիւն մը ընկճած, ճգմած էր:

ՏՈՔԹ. ՎԱՅՐԱՄ ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՆՑՈՐԳՐ. որուն «Պատիկ Նօթեր»-ու շարքը — 1899ի Արեւիյնէրուն մէջ հրատարակուած, — այնքան ինքնատիպ դրոշմ մը կը կրէին սրամտութեան ու զբաղանձակի, իր աշխատակցութեան սկզբնաւորութիւնը կրնէ այսօր Մասիսի մէջ, նարմէպով մը որուն ընթերցումը գրասէր ընթերցողներու համար մանաւանդ մտաւորական վայելք մը պիտի ըլլայ:

ՔԱՍԻՒԿ կը սկսի հրատարակել, յառաջիկայ երկուշաբթին, Բիւզանդիոսի մէջ, իբր բերօն, նոր վիպասանութիւն մը, «Բաղդախանդիք», տոնմային-ընկերական բարքերէ առնուած, Քասիսի նախորդ հեղինակութեանց գտած ժողովրդային ընդունելութեան դատելով, իր այս նոր գործը պիտի կարգացուի նոյն բուն հետաքրքրու-

բեամբ եւ ախորժով, չննորհաւորութեան արժանի է Քասիսի որ կը յարատեւէ մեր կեանքին առնուած վիպասանական ճիւղին մէջ որ ամենեւեւ աւելի անտեսուածն է Պոլսահայ գրականութեան մէջ:

ՄԷՐՍԷՏԻՍԻ համար — որ Մասիսի առաջին քիւին մէջ միայն երեցաւ — անոնք որ կը հարցնէին մեզի քե ինչո՞ւ մէջ չի գրեր, գոհ պիտի մնան տեսնելով այսօր իր վերելումը՝ Այվազովքի մահուան գոյժին առաջին տրպաւորութեան տակ գրուած զգայուն լոգուածով մը և իմանալով որ այստեղտեւ աւելի յաճախ առիթ պիտի ունենան կարդալու անոր գրական գողարիկ արտադրութիւնները Մասիսի մէջ:

Տ Ե Ր Ո Ւ Ր Թ Ե Լ Ե Ր

ԵՐԿԱՐ ՈՒՂԻՆ

( TRIOLETS )

Համն առի՛ անձան, հեշտութիւններուն,  
Համրոյրներն մեջ, անոյշ, ցիր ու ցան...  
Վառ երազներով, խանդով տոգորուն  
Համն առի՛ անձան, հեշտութիւններուն.  
Բուրաստան մ'եղաւ իմ կեանքիս զարուն  
Ուր սիրոյ վարդեր միայն փթեցան...  
Համն առի՛ անձառ, հեշտութիւններուն,  
Համրոյրներու մեջ անոյշ, ցիր ու ցան:

Ճանջցայ տառապանքն ու սուգն անսահման  
Լըքուած, պատըրւած կոյս հոգիներուն...  
Անրոյն բռնունի, որքի՛ մը նրման  
Ճանջցայ տառապանքն ու սուգն անսահման.  
Վիրաւոր սրտիս, զնւր, դեղ ու դարման  
Լալով փնտռեցի հոս հոն մոլորուն...  
Ճանջցայ տառապանքն ու սուգն անսահման  
Լըքուած, պատըրւած կոյս հոգիներուն...:

Կանչեցի Մանն որ փրկէ զիս ... — աւանդ,  
Մանն ալ, խաբերայ, միշտ քովես անցաւ  
Ու սիրելիներս ինէ՛ խըլեց վաղ,  
Կանչեցի Մանն որ փրկէ զիս աւանդ...:  
Զունի քաղցր լոյսի նըշոյլ մը նըւաղ  
Այս լոյս աշխարհն՝ ինձ համար մո՛ւթ անձաւ  
Կանչեցի Մանն որ փրկէ զիս ... — աւանդ,  
Մանն ալ, խաբերայ, միշտ քովես անցաւ:

Ո՛հ, որքան երկար, երկար է ուղին  
Ուր կը քաշկռտուիմ խոնջ ու խեղանդամ...  
Կեանքի դառնութեանց ճաշակն առնողին  
Ո՛հ, որքան երկար, երկար է ուղին...  
Կայքիմ կարօտովն համակնւլ հողին  
Որուն գրկաց մէջ շատ պիտի խնդամ...  
Ո՛հ, որքան երկար, երկար է ուղին  
Ուր կը քաշկռտուիմ խոնջ ու խեղանդամ...:

## Գ Ո Ղ Յ Ո Ւ Ա Ծ Հ Ա Ճ Ո Յ Ք Ը

(ՆՈՐԱՎԷՊ)

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԵՆ

— Սիրային յաղթանակներս . . . — չէ՛, չեմ կրնար պատմել. մազերս դեռ չեն ճերմրած . . . անգաղտնապահ պարոնս . . .

Ճերմկնալու ժամանակ ունեցած չէին Արային մազերը, իր փափկենի, խարախահեր մազերը՝ սրոնց շատ հեղ զպեր էր մանրիկ արծաթ մկրատը, որով մետաքս թելեր կր կորէ . . . արիկնը :

Երբ զինքը ճանչցայ՝ Քուշտիլի բարձունքին վրայ, մենաոր տան մը մէջ, իր «Արթն Տիս իգօղեշըն»ը, — ինչպէս կ'անուանէր զայն թունաւորուած ժպտով մը. — Արայ իր հիւանդի կեանքը կ'ոտրէր արագ, ամէն օր աւելի՛ արագ . . .

(Ծաղկազարդի առտու մը, մենք, իր բարեկամները, կրեցինք Արային դագաղը, քիւղանդեմ պատկներու տակ, իր ծաղիկը, ու թաղին աղջիկները լացին մեզի հետ) :

. . . Մանուկներու նման զօր կը ծնին գեղջուկ կիները արտի մը անկիւնը, վարուցանի միջոցին, Արայ՝ գրգարանի մը մէջ աշխարհ եկած ըլլալու էր : վայելչալուք մօրմէ մը, որ իր վաղը ընդհատած ըլլար մայր դառնալու համար :

Շնորհալի՛ վառն զի զգայուն, վայելչագեղ վառն զի բարեձեւ, տոհմիկ ամբողջ սերունդի մը աղնուականութեան խտացումը, «գումարութիւն»ն էր այս տղան. գեղեցիկ՝ արուեստական առարկայի մը նման, ու անոր պէս ալ՝ անօգուտ գուցէ :

Յաճախ կ'երթայի տեսնել զինքը ձմեռ գիշերները, երբ յուսահատ խլովթեամբ մը կր հեծէր մեր գեղը. «Եկուր միասին ձանձրանա՛ք». իր հրաւերին սովորական բանաձեւն էր աս. բայց գոնէ ես չէի ձանձրանար Արային հետ, որ նրբագգայութեան ու սրամտութեան «Լէյտեան չիչ» մըն էր, արտին տենդով արծարծուած, աւա՛ղ :

Յաճախ կ'երթայի, ու գիշեր մը ճշդիւ որդացած էի նորէն, «միասին ձանձրանալու»՝ կ'ըսէր ինծի թէ. սիրային յաղթանակները, գոնէ երէկոսաները՝ չեն պատմուիր, ու կ'աւելցնէր. քիւմէլի չիլը ծուլով դաւաթիս վրայ.

— Յաղթանակ. բարեկամ՝ հինգած է եղանակը. շատ լաւ ես յաղթանակներ, չտարուածները մանաւանդ . . . Եթէ կ'ուզես, ես ձախողութեամբ պատմութիւն մը րնեմ՝ քեզի որ աշխարհիկ հովուերգութիւն մըն է աւելի, բոլորովին արիւնգ վերջարանով մը . . .

— ???

\* \* \*

— Ուրեմն, երեք տարի առաջ, գարնան, Օտիանթ Էքսուէսով մեկնած եմ, երթալ ինքզինքս Մաքէնզիին ցոյց տալու. ու մէկէն՝ հիւանդոտ քմահաճաքով մի, ճամբէս կամովին չեղած՝ դացած խրած եմ Ֆլորանս, «ծաղիկ բարձեր»ու վրայ հաստատուած այդ պարտեզ-քաղաքը : Կարօտցած եմ Իտալիոյ կապոյտ աղւոր երկինքը, մեծ ու չքեղ արեւը. կարօտցած «Իտալիոյ այդ Աթէնք»ը. իր ձսօնե՛րը մանաւանդ՝ որ . . . հեթանոս կ'ընեն քեզի : (Ճամբորդած չես Իտալիա, չէ՞. — էհ, բարեկամ, պիտի չհասկնաս ուրեմն, թէ ի՞նչ է Տ'Աննունձիոյի «Գեղեցկութեան դաւանանքը», ու հոգիդ զօրի պիտի մնայ Գեղեցկին . . . գերագոյն օծումէն) : Բայց ես իմ ուղեւորութեան դառնամ. ահաւասիկ որ, Փեթրոս ծռած, ու գաւաղանիս հետ թեւ թելի՛ ա՛լ կ'երթամ, ամէն օր, թափառիլ, մոլորիլ քաղքին, ծոցին մէջ, մոռցուած ամէնէն ու ամէն բան մոռցած . . .

Ի՛նչ հեշտանք զգայութիւնդ օրն ի բուն անճառ գեղեցկութիւններով շարուել մարահոնել միւզէներուն մէջ, ու տաճարներուն ալ, որ հոն, գեղարուեստներն են նաեւ. եւ երբ գեղեցկին խմացութիւնդ յափրացած, ա՛լ մերժէ արուեստականը՝ երթալ գեղերիլ հրա-

մերժէ արուեստականը՝ երթալ գեղերիլ հրա-

պարակի մը վրայ հոս հատիկներ գնելով զոր արիդ մէջ իսկ կը կացեն ընտել, Եւրոպացի աղանեակներ, հոն՝ մեխակ մը առնելով ծաղկավաճառ անուշաչտի Թօսքան աղջիկէ մը, որուն մէկ մամը մօտէր եղաւ Թլոռայի սա արձանին որուն ժպտեր է Վինչին . . . Ա՛հ, բարեկամ, երջանիկ եմ այնպէս՝ ինչպէս հիւանդները դուցէ իրաւունք չունին բլլալու երբեք . . .

— Արա՛յ . . .

— Վասն զի՝ գիտես, ես չար, յեղյեղուկ ջիւեր ունիմ, յարամախոս, անհաւատարաւ իշխու բնութիւն մը զոր՝ ոչինչ մը կրնայ ծաւառել . . . Պրտի մոտմէկի՛ր, բարեկամ, թէ Անկլո-Սաքսոն զրօտաշքիկներու կարաւան մը որ յանկարծ կու գայ կ'ողողէ պանդոկս, հիւսիսի մշուշն արտում բան մը բերելով այս զուարթ օթեւանին մէջ՝ տրամադրութիւնս խօսյն դաւանացնէ, ու մազձոտ դարձնէ զիս, գրեթէ դժբաղդ . . . Ա՛լ հիմայ, պանդոկիս մէջ ամէն կողմ, ամէն անկիւն, ցից ու պրիկ Անգլոհիներ են — հագուած աւքերժներ — որ քու գոյութեանդ կատկածն ունենալու պատիւն իսկ չեն ըներ քեզի ու երամակ մը Գերմանուհիներու . . . մտի ծրարներ կատարեալ, — որ իրենց կարճատեսի աչքերը վեր աւաճ չունին Պէթէքէնէն — միւզէներու աղօթագիրքը — սրպէս զի գիտես այդ խորթ քոյրերը Լօհէնկրիսի էլզալին . . . Միակ խօսակիցը զոր ունիմ պանդոկիս մէջ՝ սեղանակիցս է, Բօրթուկացի երիտասարդ մը, որ ինքզինքը Հոսի «հիւպատոսական մարմնայն անդամ» կը նկատէ, անոր համար որ՝ օրը երեք ժամ իրր անվարձ պաշտօնեայ, կը սպասէ եղեր «իրենց հիւպատոսարան»ին մէջ . . .

Ջլախոս, բարեկամ, կը սատտկանայ, կը կատարի, ու իրիկուն մը որ հագուած աւքերժներ, երամակը, «հիւպատոսական մարմին»ը, ու սատանան ալ, կը միաբանին պրիււած ջիւերս գերագորգութեան հասցնելու՝ անհամբեր պանդոկապետին կը զիմեմ՝ յանձնարարելու որ առաւօտուն նօթս պատրաստեն, ու ա՛լ մնաք բարեա՛ւ, աղանեակ ու մեխակ . . .

— Ու կը մեկնի՛ս . . .

— Մի՛ մեկներ, ըէ՛՛ . . .

Պանդոկապետ հազիւ իր գլուխը ինծի խոնարհած՝ կը թողու զիս խօսյն, դէպ ի դուռը խոյանալու որուն առջեւ «վայրկենական» տեսարան մը ահա, պանդոկին հանրակառքը եկած կանգ առած է հոն. ու կին մը, արշալոյսի մը պէս գեղեցիկ, որուն ի տես Օթէլ Մօնթէպէլլային ապաստարները յարգալից անցք մը կը ձեղքեն գլխարկներին վերամրարձիկ, վար կ'իջնէ անկէ՝ սչորտոս առումով, ետին ձգած ազնուատիպ տարէց անձ մը։ Կը յառաջանայ, ներս կու գայ Տիկինը ահա, իր մետաքսեայ անօտարթել շքեղազգեստին շրջնովը հեշտարձարձ, ու հիացկոտ ակնարկներէս կը սահի, կ'աներեւոյթանայ վե՛ր, սանդուխներուն վրայ, իրմէ բուրած մեղմաախիւռ անուշահոտութեան մը մէջ զիս զգրած, յախշտակած . . .

— Շանթի հարուածը . . .

— Է՛հ, ի՛նչ բան՝ քեզի բարեկամ . . . գիտեմ թէ խոշոր հիացումը «գաւառացի» է միշտ, բայց կաւը՝ որով թրձուեր էր այս խառուհին, — զի իր բոլոր անձր Իտալիան կ'երգէ, — Վեոուվի կողէն խլեր են։ Լավա՛՛ է ասիկա . . . կի՛ն եղած . . .

— Եւ ա՛լ հիմա դոնէ, հիւսիսի մշուշը փառատած էր պանդոկիդ մէջ . . .

— Պանդոկապետին կը վաղեմ՝ նորէն . . . նօթս յանձնարարելու համար չէր այս անգամ անշուշտ . . . զայգը Հոսի ազնուականութենէ է եղեր, ամէնէն «մեծ»ը աշխարհիս ազնուականութիւններուն։ Այրը երկու տիտղոս ունի, ծերակուտական, ու . . . ամուսին իր կնոջը . . .

. . . Անորակերի, թթուանոյշ խոովք մը համակած էր էութիւնս։ Իտէալին բազմաւոր կրած էի . . . Ի՞նչ է շանթի հարուածը, ինչպէս կ'ըսես դուն . . . չեմ գիտեր, բայց ներգործած էր ինծի իր հմայքը։ Սիրահարած էի, դպրոցականի մը պէս, ու քիչ մըն ալ՝ հիւանդի պէս դուցէ . . .

— Օ՛ն Արա՛յ . . .

— Դո՛ւրս, դո՛ւրս նետուեցայ պանդոկէն, որիչ տեսարաններով ցօղուելու աչքերս որ կ'այրէին դեռ, պէտք ունէի շնչելու, դուրսը, գրեթե անգամ զովութեան մէջ երբ հրայրքս մեղմացաւ տակաւ, սթափեցայ քիչ մը, ու հետ-

զհետէ խելարերելով՝ մրմնջեցի ես ինծի. ինքզինքիս հետ հայրական. «Զէ՛, չէ՛, որդեակ իմ Արայ, Արայ որդեակ իմ. տխմար ու խելառ բան է քու յեղաիրած այս տարփանքդ, խելառ ու տխմար բան. ա՛լ տառնուի՞ր տարեկան չես դուն, ու «կեանքը վէպ մը չէ» . հապա ջիղերդ որ ա՛լ սէր չեն կրնար խաղալ սիրային ձեռնարկներու տաժանքին չեն կրնար տոկալ . . . : Լուրջ ու զգաստ պիտի ըլլաս դուն, Արայ որդեակ իմ, որդեակ իմ Արայ . . . » :

Ու կերդնում՝ լուրջ եղայ ու զգաստ :

— Այսինքն թէ, հետեւեալ առտուն, արշալոյսին իսկ մեկնեցար, փախա՛ր պարտէզ-քաղաքէդ . . . :

Արան չպատասխանեց . լամբարին պատույզը որ կը ծխար քիչ մը՝ իջեցուց, ու յետոյ քիւմէի շիջը նորէն ծռելով գաւաթիս վրայ, ու պղտիկ լուծեցէն մը վերջը .

— Կարգացած ես Պուռփէի Խօն թռու ժիզը . վարպետը ճակատագրականութեան վրայ հոյակապ հատուածի մը մէջ նմանութիւն մը գտած է, որուն վրայ երազած եմ ժամերով : Երկու տարարնակ էակներ, որոնք դեռ երէկ իրարու գոյութիւնն իսկ չէին գիտեր, զիպուածային, յանկարծական հանդիպում մը կ'ունենան ահա, որ իրենց ճակատագիրը կը վճռէ, ճիշդ երկու շոգեկառքերու նման որ աշխարհի հակադիր անկիւններէ մեկնելով՝ շոգեպինդ տուրային . . . զէպի ճակատագրական ահեղ բաղխումը . . . :

Զգաստ ու լուրջ ըլլալու ուխտիս յաջորդ օրն իսկ՝ Բօրթուկացի սեղանակիցս կ'ըսէր ինծի ընթրիքին. «Տիկին Բ. այսօր ձեզմով հետաքրքրուեցաւ . ցորեկը իրենց հետ ճաշեցի . Հոռմի հին ծանօթներ են ինծի . Սպանիացի ազնուական մը կարծեր էր զձեզ . դո՞՞ք էք, Պարոն, եթէ կ'ուզէք ներկայացրեմ ձեզի . ու մի՛ վախնաք որ հակառակորդներ դառնանք, զի վաղը առտուն՝ ուսի՞ծ ծաղիկէ քաղաքին . պայուսակա կապած եմ արդէն . »

Կամքի ո՞յժ . — այո՛ . բայց երկաթէ ձող մը չեմ . Տանտաղտի չարջարանքին չէի կրնար դիմանալ : Սորունկ, չափազանցեալ, խաղական խոնարհութիւն մը զոյգին առջեւ,

ու «Սպանիացի ազնուական»ը ներկայացուած էր արդէն . . . :

Ծերակուտականը, հանդարտ քաղաքավարութեամբ մը, ապաւորութիւնս հարցուց իտալիոյ ու «Շիրէնձա»ի վրայ . յետոյ քանի մը հարցում մեր ցեղին մասին . ըսաւ ինծի, Հայոց վրայ բան մը յիշած ըլլալու համար, թէ Միլանի մեծ Մատենադարանին մէջ տըպագրեալ հայերէն անգրանիկ գրքի մը մէկ օրինակը տեսած էր, տառնվեցերորդ գարէն . վերջէն ստուգեցի Միսիթարեանէ մը, թէ Արգար Դպիրին Սաղմուն է՝ եղբոր, տպագրեալ յամի Տեառն 1565, ի թուին ՌԺԴ. եթէ բանասէր ես . . . բայց Սաղմունը կին չլրօսցներ, ուստի հարկ եղաւ որ, քիանթիով ոգեւորուած՝ քիչ մը սրամտութիւն թափեմ մեր պանդոկին անգլուհիներուն կըռնակը՝ որպէս զի ծիծաղի . . . տիկի՛նք : Ու երբ քիչ մը վերջը «նէ»ն իր «պօնաւ ևօքթե»ն կ'ըսէր ինծի մագական շնորհով մը՝ զգացի թէ նախերգանքս գէշ չէր գացած, ու հոս՝ «ձգի վարագոյրն» նախերգանքին . . . :

Հետեւեալ օրը Հոռմուհին ըսաւ ինծի . «Ամուսինս այսօր Հայոց վրայ տեղեկութիւններ գտաւ Անսիֆօքթեսիին մէջ . » — «Ի՞նչպէս գտաք յանձնարարութիւնը, Տիկին . . . » — «Աշխատող եւ ուշիմ ժողովուրդ մին էք եղբր : » Գլխարկս հանեցի այս վերջին բառին դիմաց . ժպտեցաւ տիկինը, ու աւելցուց . «Բարեկամուհիներէս մին որ Արեւելք գտնուած է՝ կ'ըսէր ինձ թէ հոն ամենքը թափէ աչքեր ունին : » Անոյշ կասկածով մը դողահար՝ գլխարկս շահնեցի այս անգամ :

Ծերակուտականը ամէն օր կ'երթար քաղքին մատենադարանին մէջ փակուիլ, Ռոթթաձիւրի վերջին նախարարութեան վրայ ուսումնասիրութեան մը համար վաւերագիր մը պրպտելու, եւ իրիկունը շնորհակալ կ'ըլլար ինծի որ, «Տիկինը առանձին չէի ձգած» . քաղաքավար են իտալացիները : Բայց իրիկուն մը երբ նորէն շնորհակալութիւն կը յայտնէր ինծի՝ ակնարկա ակամայ խոյս տուաւ իրենին հանդիպելէ .

— Սիրային առաջին հախումն ուշ մը տիկնոջ հետ, նոյն օրը . բայց արդեօք ի՞նչ բոցակէզ յայտնութիւն մը ըրիր իրեն, սիրայեղջ Ռօմէօ . . .

— Ա՛յո , իմ սիրային յայտնութիւնս . . . ողորմելի կերպով քնարերգական , ուսմանս եղաւ իմ յայտնութիւնս . չեմ գիտեր թէ կիւմա՞ն էր որ կ'ուզէր առիկա Տանթէի ծնընդավայրին մէջ , չէ նէ՝ սէրը իրաւցընէ փախուկ կ'ընէ մարդս . բայց ես անպէտք անասեղծի զգայամու հատուածներ արտասանեցի իրեն , ստորագծուած հիացական տկնարկներով ու գգուտ չեղաով մը սիրոյ « զօրութեամբ կ'իմացուի » ներք : Ըսի իրեն կարծեմ . թէ . . . Բաւմա նկարիչին վառվառեայ կուսին պատկերն էր ինքր սր յանկարծ շունչ առած՝ շրջանակը ձգած ու փախած ըլլար !!! « Կը տեսնեմ որ , պատասխանեց տիկինը , անսխիշթեքին բան մը պակաս բաժնէ քեզի ցեղին վրայ , թէ Հայերը բանաստեղծի երեւակայութիւն ալ ունին . . . »

Գլուխ Արայի , բայց չկորսնցուցի . . . զըլլա . . . Եւ երբ իրիկունը պանդոկին մէկ ամայի նրբանցքին մէջ ճակատ ճակտի եկայ իրեն հետ՝ պաղատանքն մինչեւ բողբոք երկարող ստեղծաշարին բոլոր խաղերը թըրթռացուցի իրեն , ու ա՛լ այս անգամ՝ զգայամու նախադասութիւններու տեղ՝ հեշտամու բառեր հծծեցի ականջին . (Տանթէի ծննդավայրը Պօքաչխայինն ալ է . . . )

Տիկին « Կայս » ը չկտամբեց զիս . մտածումով ծանրաբեռնուած տկնարկ մը սեւեռելով վրաս՝ ըսաւ ինծի առանց չեղտի . « Հաւատացեալ եմ , դժոխք կերթամ » :

Զինաթափ էի . չնախատեսուած , անհպաւնելիութիւնն էր ասիկա . բայց վրայ բերի նորէն . « Ծամբորդութեան ատուածը , Տիկին , աւելի ներող է , կ'ըսեն . . »

Փախաւ Վառվառեան :

. . . . .

Բայց անկարելի՛ , անկարելի՛ է ասիկա , — գոչեցի ես ինծի , աչքերս խաչոր բացած . ու յեղակարծ վրդովումէ մը ցնցուած , այլալաւ , գրեթէ խեղայեղ . — անկարելի՛ , օ՛հ , անկարելի՛ է ասիկա . . . :

Անկարելի՞ — Եւ ստիպեց , ախարս , կարելի չէր սխալի . ձեռքս , այս՝ ձեռքս էր չարաչափ այցաքարաւ , ձերակուտականին այցաքարաւ իսկ եւ իսկ , վարի աջ անկիւնը

երկու անոգոք , աղիտաւոր սկզբնատատերով « Վ . Հ » վասն հրաժեշտի՛ .

Վասն հրաժեշտի՛ . . . Մեկնա՛ծ էին , մեկնա՛ծ էր ուրեմն , անիկա , Վառվառեան . . . :

Բայց , Տէր Աստուած , ինչո՛ւ . . . ինչո՛ւ . . . Երբ . . . Երբ . . . :

Դռնապանը , սառն քաղաքավարութեամբ մը կը պատասխանէր ինծի թէ , նոյն օրն իսկ — մինչ ես գացած էի քաղքին շրջակաները այցելելու — զղեկատէր մը եկած , ու աղնուական զոյգը թախանձանքով , գրեթէ բռնի՛ իր դղեակը փոխադրած էր , քաղքէն ժամ մը հեռու . . . :

Մեկնած էին մեկնա՛ծ էր . . . :

. . . Երեւակայէ , բարեկամս , կշտին ուժգին հարուած մը ընդունող մէկը որ ցաւին մէջ գալարուած՝ ճիչ մը արձակելու ուժը չունի ա՛լ : Երազներուս չէնքն էր որ յանկարծ իլլեր էր . . . սրտիս վրայ . . . :

Բոլոր գիշերը յօրնօթիւնի մը պէս ծխեր եմ , հոգեկան թմրութեան մը մէջ անբանացած , անէացած . . . :

Ա՛լ հիմա ի՞նչ կը մնար ինծի ընելու , ի՞նչ կրնայի ընել : Ռօմէօ անուանեցիր զիս , բայց Ռօմէօն պատանի էր երբ թոյն առաւ . ի՞նչ կրնայի ընել , երթալ , սիրահարներու միջին տիպարին նման սլքառա՛ղ զղեկին շուրջը , — գոհհիկ բան էր ասիկա . նորէն , միակ կարելի բանը որ կը մնար ինծի ընելու՝ գրելն էր իրեն , այս՛ , ինչո՛ւ չէ , գրել իրեն , պաղատելով , ճուաշով որ . . . տեսակցութիւն մը շնորհէ ինծի :

Ու կանանչ թուղթի վրայ գրեցի իրեն , մին այն սիրազեղ նամակներէն զոր մարդ ինք չի գրեր , Սէրը կը գրէ իրեն համար :

Գրեցի ու սպասեցի՛ :

Իրիկունը , բարեկամս , կը ստանայի սա նամակը , զոր քիչ առաջ « հասարակաց փոս » էն հանեցի դուրս՝ որպէս զի կարդամ քեզի :

Ու Արայ տոմս մը բռնելով լոյսին սրանոր մեռած թուղթի տխրութիւնը բորբոքեց .

« Պարոն ,

« Կը խնդրէք ինձմէ որ վերսկսինք մեր « Ընդհատուած խօսակցութիւնը . բայց այդ « խօսակցութիւնը դուք տո՛ր մը փոխել կ'ուզէք , եւ ես գէշ երգող մըն եմ . . . »

« Մեծ մերս խրատն է ինձի՝ գաղտնիք չու-  
 « նենալ կնոջ կեանքիս մէջ — խրատ ականջէս  
 « սահեցուցուած, հարսնութեանս օրը, « իրր  
 « նուէր, իրր օղ: » Դեռ քանի մը օր ա-  
 « ռաջ զգացի թէ ո՛րչափ իրաւունք ունէր իմ  
 « անուշիկ մեծ մայրիկս, տեսէք ի՛նչ պարա-  
 « գայի մէջ. երբ անցեալ օր պանդուկը շէրք,  
 « եւ ձեր սենեակին դուռը բաց էր՝ կնոջական  
 « վատաւորը՝ հետաքրքրութեամբ մը ձեր խու-  
 « ցր մտայ. պճնասիրութիւնս զիս գէպի ձեր  
 « արդուզարդի սեղանը մը կէց սրուն վրայ՝  
 « սրուակ մը կար շիշա պղան գրուած, անու-

« չահոտութիւն կարծեցի զայն, ու գաղտա-  
 « գաղի՝ կաթիլ մը կաթեցուցի անկէ շապիկիս  
 « վրայ շփակիս ձեզքէն. — պէիս ու մազ  
 « փայլեցնող իւզ պոխյանքի՛ն է եղեր, վեր-  
 « ջն պիտի հասկնայի. բայց իւզին հոտը  
 « գլխուս զարկած էր արգէն, ու կաթիլը՝  
 « արսն՝ ձգեց շապիկիս վրայ: Գողցուած հա-  
 « ճոյքն էր, պարոն:

« Բալմայի Վառվառեան »

ԱՆՅՈՐԴ

## ՓՈԽՆՁ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ

Զօհեալ առ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ն Կ Ա Ռ Ն Ը

Աթենքի մէջ նրկարիջ մի,  
 Խեղօք մի մարդ, որ կը գործէր  
 Փառքի համար քան թէ դրամի,  
 Իր Արեսեան դից մեկ պատկեր  
 Ճաշակատեք անձի մը ցոյց  
 Տալով՝ նորա կարծիքն հարցուց:

Անկեղծօրէն սա ըստ թէ  
 Շատ հաճոյ էր պատկերն իրեն,  
 Ու լատագոյն կ'ըլլար եթէ  
 Նրազ արուեստ ցոյց տար դրսէն:  
 Ճարտարն իր գործ ջատագովէր,  
 Միւսը պնդէր, այլ է գուր եր:

Երիտասարդ մ'անա լիմար  
 Ներս մտաւ յանկարծ, ու առաջին  
 Հայեցումաճքին՝ «ն՛ ինչ նրկար:  
 Գոչեց ճարտար. ո՛ն, ինչ վրձին.  
 Գլուխ-գործոց մ'է սա աներկբայ.  
 Ինչ պերճութիւն, ինչ արուեստ կայ  
 Գլխանոցին, գէն ու զարդին  
 Վանանին մէջ, մինչ ոտքերուն  
 Եղնգաց ծայր. Արես ինքնին  
 Թըլի անձամբ դեմը կանգուն:

Արուեստագէտն ամօրանար  
 Բննադատին ողորմ կերպով  
 Դարձուց աչքը. գոչեց, «Արդւոր  
 Խօսեր ես դու, եմ ապահով:»  
 Ծանծաղամիտն հագիւ մեկնած  
 Զնչեց իրեն մարտի-աստուած:

Երբ քննադատն երկիւղ ջհաննի՝ դա արդէն  
 Վատ նրշան է, բայց երբ գործը տրվածարաց  
 Դովետներուն կ'արժանանայ, այն ատեն  
 Ասեկ է զայն ջնջելու ժամն է հասած:

Թարգմ. Ռ. Յ. Պ.

ՔՐԻՍՅԻԱՆ ԿԷԼԼԷՐԴ

# ՅԻՇԱՏԱԿ ՄԸ ԱՅՎԱԶՈՎՍՔԻԷ

— Է՛հ, մի վերջին անգամ էլ վայելեմ աշտեղից վերջալոյսը Պոսֆորի վերայ որին հրաժեշտ պիտի տամ վաղը :

Դեռ երէկ լուռածի պէս մտքիս մէջ տպաւորուած են այս բառերը զորս յոգնած ձայնով մը կ'արտասանէր Այվազովսքի, 1890ի յունիսի իրիկուն մը, ուշ առեւ, երկար պտոյտէ մը վերադարձին, Միսիրի Օթէլին մէջ, իր յաղթ հաւակը հանգչեցնելով լայն թիկնաթուռի մը վրայ, պատուհանին մօտ :

Երեք չորս օր երթեւեկեր էի Բերայի այդ պանդուխտ, Արեւելքի ծրար մը թելիս տակ, մեծանուն ծովանկարչին ներկայացուելու պատուին արժանանալու համար. անգամ մը մօտէն տեսնել հանճարեղ արուեստագէտը, իր խօսակցութիւնը յսել ու ձեռքը համբուրել, այս էր բոլոր փափագս. աւելին ըզձալը — interview մը՝ օրինակի համար, — չափազանց յաւակնոտութիւն պիտի ըլլար: Ու դիպումա՞ծը այնպէս կը բերէր որ ամէն երթալուս, կամ բացակայ էր եւ կամ բարձրաստիճան այցելունքէ չըջապատուած, իր մեկնումին նախօրը իրիկունը միայն, երբ պատկառելի ծերունին վար իջաւ կառքէն, իր մանկամարդ ու շնորհագեղ կնոջը հետ, առիթը գտայ իրեն հետեւելու մինչեւ իր խուցը, արուեստագէտ անձի մը հրաւերով որ Այվազովսքիին բարեկամութիւնը կը վայելէր ու գրեթէ միշտ կընկերակցեր իրեն :

Բարիզէն կու գար ու Թէոդոսիա կը վերադառնար, — ֆրանսական ստանին մէջ իր ծովանկարներուն մէկ ցուցահանդէսը կազմակերպելէ ետքը՝ երթալ առանձնանալու համար նորէն Սրիմ, իր ծննդավայրի սիրական ծովափին մօտ — « ուսկից Սեւ ծովը դիտելէ չէր յագեցած եւ որուն անջեւ կը փափաքէր մեռնիլ », ինչպէս կը գրէր Հիւի Լըրու այդ թուականին Թանի մէջ հրատարակած հոյա. կապ մէկ յօդուածին մէջ՝ Այվազովսքիին նըւիրուած <sup>(1)</sup> :

Եւ երբ բաղդ ունեցայ դէմը գտնուելու աշխարհահռչակ ծովանկարչին, ըմբռնեցի թէ որքան ճիշդ էր անոր անձին ու նկարագիրը զոր քանի մը տողի մէջ կենդանի բառերով գիտցեր էր պատկերացնել ֆրանսացի հրապարակագիրը :

« Սրիմի կենսացնցող արեւը, որ հունձքերը կրնէ այնքան խիտ, ատոքալից, վերջոտին մեղի կը զրկէ Պ. Այվազովսքին՝ կրով ու աւազով շաղախուած գոգցես, բարձրահասակ, շիպ շիտակ, ուսերը լայն, մաղերը գորշագոյն, եւ թաւ կիսամբուրներուն մէջտեղ՝ ծովուն օդէն այրած գէմք մը, շարժուածքն ու կեցուածքը ծովակալի մը հանգոյն : Աչքերը՝ շատ թուխ, գրեթէ ասիական, գիտախալ յօնքերուն տակ պահած են երկտասարդութեան բոլոր կրակը : Կր կարծէք թէ կորովի յիսնամեայ մըն է, մինչ ի վան Այվազովսքի եօթնամասուն տարեկանին կը մօտենայ » :

Ու իրաւաւ, հակառակ իր ֆանր քաւումա՞ծքին ու հանդարտիկ շարժումա՞ծքին, երկտասարդական կորով մը կար ամբողջ անձին վրայ, խօսուածքին մէջ մանուշակ, — վճիռ, յստակ խօսուածք մը, ղգայուն շեշտերով, հատիկ հատիկ բառերով, պարզ բայց տպաւորիչ : Իր բնաւորութեան գլխաւոր մէկ յատկանիշը՝ որ երեւան կուգար տեսակցութեանը մէջ՝ իր ծայրայեղ համեստութիւնն էր, չըսելու համար խոնարհամբոսութիւնը որով կը յօժարէր մտերմօրէն վերաբերուիլ դէպի իրեն մօտեցողները, որքան ալ անձանթ ըլլային անոնք իրեն. կը բաւէր որ անկեղծ հետաքրքրութիւն մը ցոյց կուտային զինքը լսելու, ճանչնալու : Այդ խոնարհամտութեանն օգտուելով էր որ գեղարուեստասէր աղջիկներ, կրթական ու բարեգործական ընկերութեանց ներկայացուցիչներ յաջողէր էին մօտենալ իրեն, այս վերջինները ստանալով մէկմէկ ծովանկար որոնց վիճակահանութիւնը կարեւոր գումարներ արտագրեց ի նպաստ իրենց վարած հաստատու-

(1) Ծ.— Այդ ուսումնասիրութիւնը ամբողջովին ծարգմանուած է 1890 յունիս 1ի երկշաբաթանեւ ՄԱՍԻՍՅէն մէջ :

թեանց : Առաջիններուն , մինչեւ իսկ յօժարեր էր , հայրական գորովանքով մը , մէյմէկ « վայրկենական » նուիրել , — պզտիկ թուղթերու վրայ ուրուագծուած նաւակ մը կամ ծովափ մը , իր ստորագրութեամբ օժտուած :

Այն կէս ժամուան միջոցին , զոր իր ներկայութեանը անցընելու անակնկալ հաճոյքը ունեցայ , Այվազովսքի կը խօսէր այդ ամէնուն վրայ , գոհունակ դէմքով մը , ցաւ յայտնելով միայն որ աւելին ընելու ժամանակ չէր ունեցած , Ու դառնալով իր կնոջը կեանքի սիրազեղ ընկերուհի մը , ինքն ալ պարզ , անուշ ու գուգուրալից , բերել կուտար նօթի տետրակը արձանագրելու համար այդ վերջին օրուան իր խոստումները , նկարներ զորս պիտի գծէր ու զրկէր Թէոդոսիայէն , ինչ որ չի մտցաւ կատարել :

Ու ատեն ատեն , ընդհատելով խօսքը , նայուածքը պատահանէն դուրս կը յառէր , մտամոխի ու երազուն մնալով ամառ զիշերուան մը զիւթիչ տեսարանին առջեւ որ կը պարզուէր նոյդ բարձունքէն : Վստփորի բերանը , մթնշաղկին մէջ , ծովախորշի մը ձեւն առած , իր գորշ կապոյտ ծոցին մէջ կը պարփակէր խարսխուած վիթխարի նաւերը որոնց ճրագները վառել կը սկսէին , մինչ յետամնաց չոգնեալակներ՝ օձապտոյտ չրջաններով կը սուրային , կ'անհետանային գէպ ի վեր , հեռուն՝ կղզիները , մշուշին մէջէն , կը կազմէին համայնապատկեր մը որ հանգիստի ու խոկման այդ ժամուն աւելի խորհրդաւոր կը դառնար : Ալիւոր նկարիչը , ճշմարիտ բանաստեղծ , հրապուրուած , աղքատ բնութեան ընծայած պէսպիսութիւններէն որոնք հազարումէկ յղացում ու ներշնչում կու տային իրեն , գրեթէ մանկական շլացումով մը կը յայտնէր իր տալաւորութիւնները , մինչ Տիկին Այվազովսքի՝ օրուան մէջ կատարած՝ գնումներուն — պիպլոններ , լուսանկարներ , յիշատակներ յարգարումը կը կատարէր խոցին մէջտեղ , կտր սեղանի մը վրայ , չի մոռնալով ատեն ատեն ժպտուն ակնարկ մը նետել իր ամուսնին , եւ ուստահայ կնոջ անտեթեւեթ լեզուով ընդմիջումներ ընել որոնք՝ հակառակ իրենց միամիտ ձեւին՝ այնքան անուշ կու գային իր հանճարեղ էրկանը :

Իր արրուն հասակին մէջ վիպական ամուսնութիւն մը կնքած էր Այվազովսքին , — ինչպէս իմացայ ետքէն : Առաջին կնոջմէն , որ օտարուհի մըն էր — Անգլուհի մը , եթէ չեմ սխալիր — բաժնուած էր վաղուց , ու մինաւորիկ կ'ապրէր իր վրձինին ու նկարներուն հետ : Օր մը , Ռուսիոյ մէջ իր կատարած մէկ ճամբորդութեանը միջոցին , կայարանի մը մէջ կը հանդիպի այս հայ աղջկան , բարձրահասակ իրեն սէս , վարդապոյն այտերով , խրնդուներես , սիրուն , քաջառողջ տեսքով . կասախումբի երթեւեկի ժամերուն վրայ սովորական խօսակցութիւն մը ու քանի մը հաճոյալի բառեր բաւական կ'ըլլան իրեն ծանօթութիւն հաստատել օրիորդին հետ որուն սիրահարուած էր արդէն : Կը գուշակէք աղջկան շիկնումը եբբ կ'իմանայ իր խօսակցին ո՛վ ըլլալը , ու ապուրթիւնը՝ երբ Այվազովսքի . . . իր ձեռքը կը խնդրէ :

Ամուսնութիւնը կը կատարուի շատ չանցած , ու արուեստագէտը կը վերակազմէ իր բնտանի յարկը որուն տակ՝ հակառակ իր հանճարին , իր հարստութեանը ու իր վաշեւած փառքերուն , սիրուած ու սիրող կնոջ ներկայութիւնը — այսինքն՝ կեանքը — կը պակսէր մինչեւ այն ատեն :

Այդ թուականէն , նոր կորով մը կը տոանայ իր ձեռքը ու նոր հրայրք մը՝ իր երեւակայութիւնը :

Տասը տարիներու տարտամ յիշողութեամբ մը , կը մտաբերեմ այս վայրկենիս՝ թէ իր աշխատելու եղանակին վրայ ուղղած երկչոտ մէկ հարցումիս պատասխանելով , բացատրեց թէ ինչ մտածումով ինք իր տանը մէջ հաստատած էր իր atelierն , մինչ եւրոպացի նկարիչներն ու քանդակագործներէն շատեր՝ առանձին աշխատանոցներ կ'ունենան : Որովհետեւ , ըսաւ , երբ արուեստագէտը արշաւոյսին կեղծ անկողինէն , գիշերային հանդարտութեան մէջ իր երկնած գաղափարները , իր երեւակայութեանը մէջ ծրագրած՝ ուրուագիծները պէտք է կտաւին յանձնէ իրենց թարմութեանը մէջ , առանց բնու խանգարուելու ո՛ր եւ է արտաքին ազդեցութենէ . եւ այս բանը կարելի է միայն՝ աշխատանոցը տունին մէջ ունենալով . մինչդեռ եթէ դուրս

եղել հարկ ըլլայ, անտարբե հանդիպում մը, տաղտկացուցիչ խօսակցութիւն մը կրնան վեր ի վայր շրջել նկարիչին միտքը ու տարադնել ինչ որ ամբողջած էր հոն:

Երբ կը պարզէր այս տեսութիւնը, տակաւին անտեղեակ էի իր սիրային ամուսնութեան պարագաներուն. ետքէն միայն, երբ խնացայ ծերունի արուեստագէտին երիտասարդական խանդավառութեանը իր կնոջը վրայ մտածեցի, — խղճահարութիւն մըն է այս զոր պէտք է խոստովանիմ՝ իր մահուանը վրայ

գրելուս առթիւ — թէ գուցէ այդ բոլոր քննություններուն տակ պարտական իրականութիւնը, իր կնոջմէն օրն ի բուն անբաժան մնալու, անոր խնամքներէն շրջապատուած, դառնութեան վայրկեաններու մէջ անկէ ըստ փոփոխուած աշխատելու անփոխարինելի երանութեանը համար էր միայն որ Այվազովսքի իր տունէն անբաժան կը պահէր իր atelier-ն, որունք՝ երկուքը մէկանց՝ ծածկուած են հիմակ սուգի վարագոյրի մը տակ:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

### ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ, թ. 1071-1076.

Տէր եւ Տնօրէն Բ. Քէզեմէն.

Ուշիոյ հայ եկեղեցիները (Նամակ ԶԼյ-թունէ), — Քրոնիկ Ս. Տեղեայ. Վ. Վրդ. Սաւուրեան: — Գաւառային Քրոնիկ՝ Սեբաստիայէ. Նոյն՝ Արաբկիրէ: — Պաղեստինի Հրեաները. Խ. Գաւառեան: — Թուրքիոյ գիւնիները առեւար. տեսակէտով: — Բանասիրական. Հին Մաղաքա (Կեսարիա) գտնուած չէ. Տրդատ եղիսկ. Պաշտան: — Հայ Վանորայք. Նոյն. Որբ աղջիկներուն ապագան թղթակցութիւն Սեբաստիայէ: — Շարժումն մեծ դէպքը (Խրմապարական). Բիւզանդ Քեչեան: — Երգիծարանութիւնը մեր մէջ. Արշակ Այսոյան: — Գիւղանտեսական զարգացման տէր գոտաւորները. Տիրույր Վրդ. — Ռումանայ Քրոնիկ: — Պատմութիւն քաղաքակրթութեան. թարգմ. Կ Ս. Պոսիկեան:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ, թ. 347-352.

Տէր եւ Տնօրէն Տ. Ճիւլէլէկեմէն.

Արուեստահանդէսը (Խմբագրական). Զարմայր. — Յովհաննէս պէյ Տառեան (Կենսագրական անարկ). Վ. — Անդրիա եւ Ամերիկա. Կամ անգլո-սաքսոնը (Քաղաքական տեսութիւն). Լիւնիէ: — Զինատան. Նոյն: — Պարսկաստանէ լուրեր (Նամակ Դուրէթէ): — Բարիգեան Քրոնիկ. Տ. — Պալլաքլի գերեզմանատունը. Ժ. — Խորհրդանշանը (Նորալէպ). Ե. Դոշանեան: — Պատկեր. Լուցիկի տուփը. Մ Ս. — Լուրեր Վանէն (Թղթակցութիւն):

ԱՐԵՒԵԼԻՔ, թ. 4301-4306.

Տէր եւ Տնօրէն Զ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ.

Հայրապետական Կոնգակը (Խմբագրական). Զարեհ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ: — Աւագ չարաթը Երուսաղէմի մէջ. Վրդ. — Սառա Պէռնարի սկզբնաւորութիւնը (Թարգմ.). — Մանգինեանի յոբելեանը (Նամակ Թիֆլիզէ) Ք. Ս. — Տեղապարական. Ամասիա. Գ. Օզանեան: — Էրզրումի գործեր. Նորայր: — Երբեակ գիւնակցութիւն եւ «Տէպա» (Քաղաքական տեսութիւն) Զ. Ե. — Հիւանդին ձայնը (Նորալէպ). Կ. Ոսկեան: — Աւագ. առնիքը Երուսաղէմի մէջ. Վրդ. — Թոքախտի դէմ. Տոք. Յ. Սանազանեան: — Նամակ Բարիզէ. Ռուս կեանքէ. Ա. քեչ Ապրեան: — Իրական յաղթանակ մը. թարգմ. գերմաներէնէ Ֆրոյտ Շ. Ժողովրդական անդարանութիւն. Գ. Ճիլիւնեան:

ԾԱՂԻԿ, թ. 143-148.

Արտօնատէր Ա. ԱՄՆԱՆԵԱՆ.

Քաղաքական Կոնգակը (Խմբագրական). — Բնական Քրոնիկ. Օ. Թ. Նշանեան: — Կոփ գիւղի մէջ յաւեր. Կ. Սանոսեան: — Պարսիկապատման Թիֆլիզէ. Ն. Գ. Նիկողոսեան: — Երկու Յիւսէփ ծննդեան եւ մկրտութեան ճշգրտութիւնը. Մ. Ս. Վրդ. — Տեղապարական. — Լուսնային Նիւնիք. Վ. Գ. Ս. — Աղքատ հարկի մասին. Մ. Ս. Վրդեան: — Եօթնակը (Խրմապարական). — Գաւառի տակ. Թեոդիկ Լապճընեան:

ԱՐՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինճանճըլար եօղուշու, թիւ 27



# Է Ք Ի Թ Ա Պ Լ

Ամերիկեան Ապահովագրական Ընկ.

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԷՆ ՀԶՕՐԸ

Տնօրէն՝ Թուրքիոյ ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱՆԱՏՈՒՐ, Կ. Պոլիս, Անանիատի խան

Ի դէպ մահու ապահովագրութիւն

Միայն 20 տարեվճարով

Մահուան պարագային տարեվճարը կը դադարի  
(VIE 20 PRIMES)

Օ Ր Ի Ն Ա Կ

Տարեք 35, գումար 100,000 Ֆրանք ի դէպ մահու վճարելի

|                                                     |     |       |
|-----------------------------------------------------|-----|-------|
| Ֆրանսական ընկերութեանց թարիֆին համաձայն տարեվճարն է | Ֆր. | 4140  |
| Էսթրապլ ընկերութեան թարիֆին համաձայն տարեվճարն է    | »   | 3408  |
| Տարեկան տարրերութիւն ի նպաստ էքիթապլի               | »   | 732   |
| 20 տարուան մէջ տարրերութիւն ի նպաստ էքիթապլի        | »   | 14640 |
| 100 ին 5 էն բաղադրեալ տոկոսով                       | »   | 25414 |

Այսինքն աւելի քան 6 տարեվճարի խնայողութիւն մը Ի Ն Պ Ա Ս Տ Է Ք Ի Թ Ա Պ Լ Ի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ա.

ԱՐՈՒԱՐՁԱՆԻՆ ՏՂԱՆ 3 հասոք

Բ.

ՀԱՆՐԱԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ 1 հասոք

Թարգմանութիւնք Կ. Ս. Իթիթիձեմնի

Խիստ հետաքրքրաշարժ, գրաւիչ եւ միանգամայն բարոյացուցիչ վէպեր:

Կը գտնուին ամէն գրաւաճառաց քով:

Կեդրոնատեղին է Պաղատեան գրաստան, Սուլթան Համամ, թիւ 14:

Գին իւրաքանչիւր հասոքին 5 դրուտ:

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղ-  
եաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ գաղղիական ախտերու: Բերա, Թագսիմ փո-  
ղոց, թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ” Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնապիւնակ էջերէ  
բաղկացած, ճոխ բովանդակութեամբ, իրր ամբողջական հատոր մը թղթակազմ, հրա-  
պարակ ելած է եւ կը ծախուի ամէն գրաւաճառի քով: Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷ-  
ՈՍԵԱՆ Տպարան: Գինն է 40 դր.: Գաւառներէ ուղղորդող պէտք է 5 դր.: աւելի  
վճարեն իրր թղթատարի ծախք:

# Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնում 1828—1829 ին



ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԻՆՔԻ ՃԻԻՂԻՆ  
97 Միլիոն

ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՆԵԱՅ ՃԻԻՂԻՆ  
137 Միլիոն

Հնկերութեան զրամատունն է  
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնն կֆ. Քայսերլեան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան կֆ. Տէր Ներսէսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան  
Օսմ. Պանքայի դէմ

Կ. Ս. ՈՍԿԵՍՆ

## ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐԻ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

ԱՌԵԼԻ ՔԱՆ 25,000 ՐԱՌ, ՈՃ. ԵԻՍՅՆ

Այս բառարանին երկրորդ տպագրութենէն հազարաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուի ամենէն զօրաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պարաստուած լրլրով հանգերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն արժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր քառօնէ կազմի 25 դր.


Գին բնօրէ լաթակազմի 27 դր.

Կեդրոնակային է

Յ. ՄԱՏԹԻՍՍԵԱՆ վաճառատունը

Ֆինճանճըլար եօզուշու, Կ. Պոլիս

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով :



## Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մըցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնակային, Սերքէի, Քէօքիլի խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղալաթիա, Պէօլիք Միլլէթ խան, Թիւ 33

Դնողներու համար վնարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



ԱՆԱՐՈՅԹ ՏՈՔԹ. ԱՃԷՄԵԱՆ պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ յետ այսորիկ իր հիւանդները պիտի ընդունի Ղալաթիա, անգլիական հիւպատոսարանին դիմաց, Թիւ 1, տօքթ. Մէլինճէնի նախկին դարմանատան մէջ, ամէն օր, բացի կիրակիէ, Կէս օրէ վերջ մինչեւ իրիկուն :